

Հաստատվել է

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան» հիմնադրամի
..... գիտական խորհրդի թիվ նիստում
/Արձանագրություն .../
ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

Համալսարանում բարեվարքությունն ապահովող քաղաքականությունները

1. Հավասար հնարավորությունների քաղաքականություն

Համալսարանում արգելվում է սովորողների և աշխատողների նկատմամբ որևէ խտրականության և հետապնդման դրսևորումը, բոլորին երաշխավորվում են հավասար հնարավորություններ:

Համալսարանի հավասար հնարավորությունների քաղաքականությամբ արգելվում է խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական, կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Համալսարանը երաշխավորում է, որ բուհի գործունեության բոլոր ոլորտներում ձեռնարկելու է միջոցներ՝ խտրականությունը բացառելու և բոլորի համար հավասար հնարավորություններ ապահովելու համար: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, սահմաններում և կարգով առանձին կատեգորիաների անձինք կարող են օգտվել նախատեսված արտոնություններից: ՀՀ օրենսդրությամբ և/կամ Համալսարանի իրավական ակտերով սահմանված դեպքերում, սահմաններում և կարգով առանձին կատեգորիաների պաշտոնների/աշխատատեղերի համար կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

Համալսարանը հաստատում է այն դիրքորոշումը, որ Համալսարանի սովորողները և աշխատողները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բոլոր տեսակի չարաշահումներից պաշտպանության իրավունք ունեն:

2. Կարծիքի արտահայտման ազատության քաղաքականություն

Համալսարանում սովորող և աշխատող յուրաքանչյուր անձ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Համալսարանը երաշխավորում է կարծիքի արտահայտման ազատության պաշտպանությունը:

Համալսարանի մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Համալսարանի մասին տեղեկատվական, կրթական, գիտական, մեթոդական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող գործունեությունը բխում է Համալսարանի առաքելությունից:

Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Համալսարանի տարածքում կարծիքի արտահայտման ազատությունը չպետք է վնասի բուհի գիտական, կրթական, մշակութային, սոցիալական և տնտեսական բնականոն գործունեության իրականացմանը, չպետք է խախտի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը, չպետք է խոչընդոտի նրանց պարտականությունների իրականացմանը:

Համալսարանի բնականոն գործունեությունն ապահովելու համար բուհի համապատասխան իրավասու անձանց հետ նախապես պետք է համաձայնացվեն տարբեր միջոցառումներ անցկացման վայրը, ժամանակը և եղանակը:

3. Հավաքների և միավորումների ազատության քաղաքականություն

Հավաքների և միավորումների ազատության քաղաքականությունն իրականացվում է ՀՀ սահմանադրությամբ և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված շրջանակներում: Համալսարանը երաշխավորում է այդ ազատության իրականացման պաշտպանությունը:

4. Կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական գործողություններին հակազդելու քաղաքականություն

4.1. Համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական գործողությունների կանխարգելումն իրականացվում է հակակոռուպցիոն ռազմավարության Ծրագրով և այդ ծրագրի գործողությունների պլանով:

4.2. Համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական գործողությունների կանխարգելման քաղաքականության նպատակներն են՝

- 1) կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ հնարավոր կոռուպցիոն երևույթների կամ առանձին փաստերի նշանակալիորեն սահմանափակումը,
- 2) Համալսարանում մատուցվող հանրային ծառայությունների որակի բարձրացնելը,
- 3) սոցիալական արդարության ընկալման բարելավելը,
- 4) բուհի մրցունակությունը և գրավչությունը ներդրումների համար ամրապնդելը կրթության և գիտության ոլորտների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:

4.3. Համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական գործողությունների կանխարգելման քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

- 1) կառավարման համակարգի կատարելագործումը և այդ համակարգի արդյունավետության բարձրացումը,
- 2) կառավարման գործընթացում կառույցների ղեկավարների և աշխատակիցների անձնական պատասխանատվության բարձրացումը,
- 3) դինամիկ զարգացմանը զուգընթաց կառավարման կառուցվածքային համակարգի բարեփոխումները,
- 4) Համալսարանի գործունեության տարբեր ուղղություններում կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը,
- 5) գիտակրթական կառույցների, ՎԱ և ՊԴԱ գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության պատշաճ իրազեկվածությունը,
- 6) կառավարման և գիտակրթական գործընթացներում նոր մեթոդների ներդրումը, որոնք ապահովում են գործունեության առավել հստակությունը, կանխատեսելիությունը և թափանցիկությունը,
- 7) ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների կառավարման կատարելագործումը,
- 8) բոլոր մակարդակներում և յուրաքանչյուր օղակում, ներառյալ՝ ինքնակառավարվող մարմիններում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը աջակցությունը:

5. Ռիսկերի կառավարման քաղաքականություն

5.1. Ռիսկերը ՀՀ օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ, սույն Կանոնակարգի և ներքին իրավական ակտերով նախատեսված կանոնների ոչ լիարժեք իրականացման, խոչընդոտների առաջացման, ռեսուրսների բացակայության կամ ոչ բավարար լինելու պատճառով գործառույթների նպատակներին չհասնելու հավանականությունն է:

5.2. Ռիսկերի կառավարման քաղաքականությունը ՀՀ օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով նախատեսված կանոնների պահպանմանը և կատարմանն ուղղված միջոցներն են, որոնք ուղղված են ռիսկերի չեզոքացմանը: Ռիսկերի կառավարումն իրականացվում է սույն Բարեվարքության Կանոնակարգի 2-րդ բաժնում թվարկված՝ Համալսարանի բարեվարքության սկզբունքների կիրառմամբ և միջոցներով:

6. Քաղաքականությունների իրականացման իրավասությունը

Քաղաքականությունների իրականացման պարտականությունն իրենց իրավասության շրջանակում պատկանում է Համալսարանի ռեկտորին, վարչական և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, Ուսանողական խորհրդին: Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները ներգրավվում են այդ քաղաքականությունների իրականացմանը: Քաղաքականության խախտումների վերաբերյալ բողոքները ենթակա են քննարկման Բարեվարքության կանոնակարգով սահմանված կարգով: